

Ե. Տ. ԲԱՆՈՒՐՅԱՆ (Ե. ՆԵՂՐՈՎ)

# ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Է ԸՆՏՐԵԼ

ՃՈՂՈՎՐԻՆԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՅՈՒՑԻՑԻՉՆԵՐ

Թարգմանեց

ԱՐՄԷՆ ՏԷՐ-ԱՌՌՔԵԼԵԱՆՑ

ՊԻՆՏԻՆ



Տպարան «ՆԻՐԱԿ» Ալեքանդրապոլ

1906

(41)

342.8

P-22

342.8

Բ-22

*Յ. Ջոհանյան*

MAR 2010

Ե. Տ. ԲԵՆԿՈՐՅԱՆԸ (Ե. ՆԵՐՍԻՍԸ)

# ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Է ԸՆՏՐԵԼ

## ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՑԻՉՆԵՐ

Թարգմանից

ԱՐՄԷՆ ՏԵՐ ԱՌԱՔԵԼՆԵԱՆՑ



Տպարան «ՆԻՐԱԿ» Ալեխանդրապոլ

1906

(41)

28 FEB 2013

35. 6x2

ԹԳՏԵՂ ԳԻՏՆԱԿԱՆ ԵՄՍՊՁՆ Գ

ՅԵՏԵՎՈՒԹՅԱՆ ԳՐԱԳՐԱԴԱՐԱՆ

Дозв. Цензурою 17 Апрѣля 1906 гор. Тифлисъ



49445-65

Գրանցման գրքի համարը և այլուց այլ  
հարցերի վերաբերյալ հարցազրույցներ  
հարցազրույցներ հարցազրույցներ  
հարցազրույցներ հարցազրույցներ  
հարցազրույցներ հարցազրույցներ

ԻՆՉՊԼԵՍ ՊԵՏԳԷ ԸՆՏՐԵԼ

**ԺԱՂՈՎՐԻՇԿԱՆ ՆԵՐԿԱՅԵՑՈՒՑԻՉՆԵՐ**

Մենք հենց այժմ գտնուում ենք ժողովրդա-  
կան ներկայացուցիչներ ընտրելու նախօրեակին:  
Բայց արդե՞ր շատերը գիտեն թե՛ ինչպե՞ս են  
կատարում այդպիսի ընտրությունները, թե՛ ինչ  
կերպ պետք է գոցա մտանալ և ինչից սկսել:  
Նախապատրաստելով առաջիկայ ընտրություն-  
ներին, մենք կարող ենք գոցա մասին խօսել  
միայն ինչ մեզ յայտնի է ուրիշ երկիրներում  
կատարող ընտրությունների հիման վերայ, ուր  
վաղուց արդեն մտցրած է ներկայացուցչական  
կառավարություն:

Այսպիսի մի մեծ երկրում ինչպիսի՞ն է այժ-  
ման Ռուսաստանը, անկարելի է բոլորին հա-  
մախոհել, կամ հասարակական ժողովի հրախո-  
սել:

20. 20. 20

րել, ինչպէս այդ անուս էին մեր նախնիքները նօսփօրօղում կամ Պսկովում, կամ ինչպէս այժմ անուս են Ղվիցյարեայի մանր կանտօնների քնակիչները, սրանք օրէնքները և վճիռները բննում են համաժողովրդական ժողովներում:

Գորա համար պէտք է մի ուրիշ եղանակ գործածել, այն է, ընտրել սխրած, հաւատարմատար մարդկանց, սրանց վերայ ամեն մի բանում կարելի լինի յոյս դնել և յանձնարարել նոցա վարելու կառավարութեան գործերը:

Գերմանացիների և Արեմնուարի միւս ժողովրդների մէջ վաղուց արգէն գոյութիւն ունի այդ ձևի «ներկայացուցչական» կառավարութիւն: Մեզ, սուտներին, մնում է միայն օգտել նոցա փորձերից, ըմբռնելով լաւը և մի կողմ չպրտելով վատը, ի, պէպ յիշել նաև մեր սպասմութեան մէջ, մինչև Մոսկովեան ժամանակներում գոյութիւն ունեցող վագեմի ժողովրդատիրապետութիւնը:

Ժողովրդական ներկայացուցիչներ ընտրելու համար, բաւական է միայն Ռուսաստանը շրջավայրերի (ОКРУГЪ) բաժանել, և ամեն մի շրջավայրում առանձին ընտրութիւններ կատարել: Զանազան շրջավայրերի ընտրածները ի մի հաւարելով, կրկագմեն համայն ուստ երկրի ներկայացուցիչների ժողով կամ ինչպէս ասում են

Земскій Соѳоръ: Այդ ժողովը կը որոշէ թէ ինչ օրէնքներ պէտքէ լինեն Ռուսիայում և այն, թէ ինչ կերպ պէտքէ գումարւի տարեց տարի ժողովրդական ներկայացուցիչների մշտական ժողովը ապագայում, որպէսզի սուսմնատիրէ ժողովրդական կարիքները, մշակէ օրէնքներ, և հետամուտ լինի կառավարչական ամեն մի կարգերին:

Ի հարկէ ճիշտ և անաշառ լինելու համար այդպիսի մի գործում անհրաժեշտ է որ քաղաքացիների հաւասարութիւն լինի. պէտք է որ բոլոր շափահատ քաղաքացիք, 20 կամ 21 տարեկանից սկսած, կլին թէ տղամարդ հաւասար իրաւունք ունենան ընտրութիւններին մասնակցելու (ի հարկէ բացի հոգեկան հիւանդներից և տկարամիտներից), այսինքն որ ամերը 1 ձայն ունենան, առանց տարբերութեամբ, ազրատ կամ հարուստ, զարգացած կամ անզրադէտ. գորա համար անհրաժեշտ է ճիշտ կերպով որոշել թէ քաղաքացիների ինչ թիւից պէտք է մի ներկայացուցիչ ընտրել, և այդ կանոնը ամեն մի շրջավայրում պահպանել սրբան կարելի է խիստ կերպով:

Եթէ ասենք 100,000 ընտրողների վերայ ենթադրում է մի ներկայացուցիչ. այդ ժամանակ այն շրջավայրում ուր կլոր լիւով 400,000 ըն-

տրողներ է հաշվուում, պէտք է ընտրւի 4 պատգամաւորներ (ներկայացուցիչներ), այն շրջավայրում, ուր 200,000 ընտրողներ են, պէտք է ընտրւի 2 պատգամաւոր և այլն: Եւ ամեն մի անգամ, նոր ընտրութիւններ կատարելիս, պէտք է որքան հնարաւորէ ճիշտ կերպով թւել, թէ ինչ կերպ է ամեն մի շրջավայրում փոփոխուել ազգաբնակչութեան բանակութիւնը և թէ նեկայումս որքան չափահաս քաղաքացիներ կան նորանում և դորա համապատասխան որոշել թէ քանի ներկայացուցիչներ պէտք է ընտրեն այս շրջավայրում, միւսում, երրորդում և այլն: Բայց այդ գեւ բոլորը չէ: Ընտրութիւնների ժամանակ երբեմն այնպիսի կանոն են մտցնում, որ ընտրողները ընտրում են իրենց պատգամաւորներին ոչ անմիջական կերպով, այլ «ընտրողների» իսկ գրանք իրենց միջից ընտրում են արդէն պատգամաւորներ: Այդպիսի կանոն օրինակի համար մըտցրած էր սենատօր Զիլլովսկու յանձնաժողովի համար ընտրւած բանւորների ներկայացուցիչների վերաբերմամբ, որը հիմնւած էր հետազօտելու Պետերբուրգի գործարանների գործադուլների պատճառները, և պարզելու բանւորների կարիքները:

Բայց յամենայն գեպս լաւ է որ միշտ ուղղա-

կի կերպով ընտրել իսկական ներկայացուցիչներին, որովհետև չնորհիւ «ընտրողների» փոքր թւին, հեշտ է կաշառել կամ վախեցնել նոցա, սրով երբեմն օգտուում են «ուժեղ» մարդիկ: Նոյն այդ նպատակի համար, այսինքն, ապահովելու համար ամեն մէկի ընտրութեան ազատութիւնը, ազատել ու որեւէ մեկի ճնշումից, վախեցնելուց և հետամտութիւնից, անհրաժեշտ է մտցնել գաղտնի ձայնատուութիւն, ինչպէս օրինակ լինում է փակ բուէարկութեան ժամանակ: Այդ նշանակում է որ ամեն մեկը իր ցանկացած թեկնածուի անունը կը գրի տոմսակի մէջ, ոչ օրի ցոյց չը տալով և կը գցի ընտրողական տուփը, և արդէն ոչ ոք իրաւունք չունի պահանջելու որ ընտրողները ցոյց տան տոմսակները կամ հարցեն թէ ում են ձայն տւել:

Այդ կանոնները պահպանելով միայն, շատ թէ քիչ ժողովրդական ներկայացուցիչների ժողովը կը կարողանայ իր կօշումը արդարացնել, այսինքն կը կարողանայ արտայատել համայն ժողովը իսկական կամքը և ցանկութիւնը. նորանում համաշօփօրէն կը ներկայացնուի երկրի բոլոր մասերը և ազգաբնակչութեան բոլոր գաւառակարգերը:

Ժողովրդական պատգամաւորներ ընտրելու

այժմ նկարագրած կարգերի իրաւունքը կոչուած է «քնդհանուր, հաւասար, ուղղակի և գաղանի ընտրողական իրաւունք»: Գորա համար էլ ասում են որ միայն այդ օրինակ ընտրողական իրաւունքով ժողովուրդը կը կարողանայ իրաւէս կառավարել ինքը իրեն:

Գորա վերայ պէտք է աւելացնել այն, որ ընտրութիւնները նշանակեն տօն օրերին, երբ բոլորը ազատ կրկնեն գործերից և գորանով կարող կը լինեն առանց դժարութիւնների մասնակցութիւն ունենալ ընտրութիւններին, և որպէսզի պատգամաւոր կարողանայ ընտրել և հասարակ բանւորը և գիւղացին, անհրաժեշտ է որ ժողովրդական ներկայացուցիչներին թողակ նշանակեն, այդ դէպքում նորա էլ չեն վախենայ իրենց սովորական եկամուտը կորցնելուց այն ժամանակամիջոցում, երբ կը գտնեն պատգամաւորի գերում, և գորանով էլ հնարաւորութիւն կունենան հանգիստ կերպով կատարելու իրենց պատգամաւորական պարտականութիւնները և նրւիրելով բոլոր ժամանակը գորան, աշատուրջ կերպով կը պաշտպանեն իրենց ընկեր—ընտրողների շահերը:

Բայց այդ էլ դեռ բոլորը չէ: Մ'նում է ամենակարեւոր հարցը: Ո՞ւմ ընտրել ներկայացու-

ցիչ, ինչպիսի պատւեր տալ նոցա, և ինչ կերպ այդ պատգամաւորները պէտքէ պաշտպանեն այդ ամբողջ ընկերների շահերը: Ի՞նչպիսի օրէնքներ և միջոցներ մտցնել: Բաւական չէ միայն լաւ ընտրողական իրաւունք ունենալը, պէտքէ և գորանից օգտուել կարողանալ. այլ կերպ «բանջարանոցը ցանկապատելու կարիք էլ չկայ»:

Խնրնստինքեան պարզ է որ ժողովուրդը աւելի լաւ կը օգտուի ընտրողական իրաւունքից այն ժամանակ, երբ իրա ընտրող մասսայի մէջ շատ կլինեն այնպիսի մարդիկ, որոնք կը հասկանան, թէ ինչպիսի օրէնքներ և կարգեր են հարկաւոր, ցաւից ու հոգսից ազատելու և ընդհանուր կեանքը բարեխաւիւր համար: Այն ժողովուրդը կարող է օգտուել մշտապէս բարեկեցութեամբ, որի մէջ շատ կը գտնեն այնպիսի մարդիկ, նա իր ներկայացուցիչներին կարող է ճիշտ և ուղիղ պատուէր տալ, յանձնարարելով նոցա ներմուծելու ժողովրդին օգտաւէտ այս կամ այն միջոցները և օրէնքները:

հետևապէս ամեն մի բարագցի պէտք է ձգտի պարզ պատասխան տալ իրեն այդ հարցերին, և պարզէ նախօրօք, թէ ինչ է անհրաժեշտ բոլոր ժողովրդի և ամեն մէկի բարեկեցութեան համար, Իսկ այդ հեշտ հարց չէ. այդ մի-

այնակ անհնար է վճռել. պէտք է ուրիշներէ, ընկերներէ հետ միասին ժողովներում ուսումնասիրել այդ և ոչ մի կամ երկու անգամ, այլ ինչքան որ կարիք կըզգացուի գործը լաւ և բազմակողմանի կերպով ուսումնասիրելու համար: Անհրաժեշտ է նայնպէս, որ ամեն մէկը կարողանար այդ բոլոր օրէնքները ազատորէն քննել ոչ միայն բերանացի, այլ և մամուլի միջոցաւ, այսինքն ոչ միայն ժողովներում վիճաբանութիւններէ մէջ, այլ և լրագիրներում, ամսագրերում և դրքսոյկներում: Անհրաժեշտ է ազատ և ամենալայն, մտքերի փոխանակութիւն: Բայց այժմնս գեռ Ռուսաստանում այդ չի կարելի անել, և այդպիսի ժողովները առայժմ արգելում են, իսկ եթէ թոյլատրում են էլ, դարձեալ դոցանում չի կարելի ազատ խօսել. գրքերում և լրագրներում էլ չի թոյլատրում ամենը սպազբելու: Գորանից երևում է որ ռուսաստանում շնորհիւ ժողովի, խօսքի և մամուլի լիակատար ազատութեան բացակայութեան համեմատաբար դժւար է այդպիսի հարցեր վճռելը, քան ուրիշ երկիրներում: Բայց ինչ էլ որ լինի, այդ ամեն մէկը պէտքէ վճռէ, ով իրեն և հայրենիքին բարիք է ցանկանում, ով ոչ թէ անշարժութիւն է ցանկանում, այլ մտաւոր դար-

դարձում և կեանքի բարեխառնութիւն:

Բայց այստեղ ևս մի նոր դժուարութիւն է երևան գալիս:

Տէնց որ մարդիկ սկսում են քննել, ուսումնասիրել այդ հարցերը, խօսոյն և եթ աչքի է ընկնում նոցա կարծիքների տարբերութիւնը. մի բանիսը գործը այլ կերպ են հասկանում, միևնեքը այլ, սորա այս մէկն են ուզում, նորա այն միւսը, այնպէս որ շատերի համար անհնար է գաւնում միանգամայն բացատրել, այնքան տարբեր են նոցա հայացքները և ցանկութիւնները: Պարզ է, որ ոչ մի չըջտվայրում չի կարելի այնպէս անել, որ բոլոր ըտրողները թեկնածուներ նշանակեն միօրինակ հասկացողութիւն ունեցող մարդկանց, և տային նոցա միօրինակ յանձնարարութիւններ, ժողովրդական ներկայացուցիչների ժողովներում գործելու համար:

Եւ ահա, որպէսզի ընտրութիւնների ժամանակ խառնաշփոթութիւններ և դժուարութիւններ չը ստացուի, անհրաժեշտ է, որ նախօրօք միատեսակ հասկացողութիւններ և ցանկութիւններ ունեցողները, ամեն մի բազարում, գիւղում, գարձարանում, հնարաւորութեան շարի միանան և կազմեն մի միութիւն, մի խումբ և լաւ ուսումնասիրեն, թէ իրենց կարծիքով ինչ պէտք է

ձեռք բերեն ներկայացուցիչները համայնական ժողովում, այսինքն, ուրիշ խօսքերով, բնագծեն մի ընդհանուր ծրագիր: Ամեն մի շրջավայրի, մի օրինակ հայացքների տէր մարդկանց այդպիսի խմբերը պէտք է իրար հետ կապ ունենան և ամբողջ շրջավայրի համար կազմեն մի մեծ միութիւն, որպէսզի ամբողջ միութեան համար, համախօսներից, թեկնածուների մի ցուցակ կազմեն և աշխատեն ընտրութիւնների մէջ անցկացնելու իրենց թեկնածուներին, առանց իրենց ձայները բաժանելու, ու այդ կերպ, ամեն մի շրջավայրում կը կազմւի այդպիսի երկու, երեք կամ աւելի միութիւններ, և ամեն մէկը կունենայ իր ծրագիրը և իր թեկնածուները, որի թեկնածուի կողմը որ լինի ձայների մեծամասնութիւնը, այն էլ կը լինի այդ շրջավայրի ժողովրդական ներկայացուցիչը: Ինքն ըստ ինքեան հռոկանայի է որ ամեն մի շրջավայրի միօրինակ ուղղութեան միութիւնները պէտք է համախմբեն իրար հետ ամբողջ երկրում, և կազմեն միութիւնների միութիւն, ամբողջ երկրի և միօրինակ ուղղութեան տէր մարդկանց համար (թէ կուզ պետութեան դանազան ծայրերում ապրող) և մշակեն դաշնակից անդամների հաւանութեամբ մի ընդհանուր ծրագիր: Այդպիսի մեծ միութիւնը

կոչում է կուսակցութիւն, իսկ նրա ծրագիրը կուսակցական ծրագիր:

Ամեն մի տեղական կուսակցութեան միութիւնը, այսինքն, առանձին շրջավայրում ապրող մի սրեէ կուսակցութեան անդամների միութիւնը, ընտրութիւններէ ժամանակ իրա թեկնածուները դնում է արդէն բոլոր կուսակցութիւնների խորհրդով, այսինքն բոլոր միւս կուսակցական միութիւնների հետ, ամբողջ կուսակցութիւնների անդամների թւից: Այդպիսի կուսակցութիւններ երկրում կարող են լինել երկու, երեք և աւելի:

Այդպիսի կուսակցութիւնները արտասահմանում կատարեալ հասարակութիւններ են կազմում, նորա ունեն իրենց կանոնադրութիւնը, կասսան և կարող են ունենալ ընտրովի վարչութիւն: Այդ կուսակցութիւնների միակ նպատակը չէ միայն իրենց ներկայացուցիչներին պարլամենտ մտցնելը, այլ նորա, իրենց հայացքները տարածելու և իրենց ծրագրի կողմնակիցներին գրաւելու համար պարապում են և ուրիշ գործունէութեամբ. նորա ամեն միջոցներով պաշտպանում են իրենց անդամների շահերը, ունեն նաև իրենց հիմնարկութիւնները. գրագարաններ, լրագիրներ, ամսագրեր, ժողովրդարաններ, սպառողական պահեստներ, հացատներ, արհու-

տանոցներ եայն:

Եթէ երկրում կազմածէ մի քանի մեծ կուսակցութիւններ, այն ժամանակ ընտրութիւնների մէջ յարմար է մի կարևոր բարեփոխում ևս մտցնել, պարզենք այդ օրինակով: Ենթադրենք որ մի որևէ շրջավայրում հաշվում է 700,000 ընտրուցներ, թող նոցանից 400,000-ը պատկանեն մի կուսակցութեան, 200,000-ը մի երկրորդ, և 100,000-ը մի երրորդ կուսակցութեան: Եթէ 100,000 քաղաքացիներին մի ներկայացուցիչ է ընկնում, այն ժամանակ մեր շրջավայրը պէտք է ուղարկէ 7 ներկայացուցիչ:

Եյն դէպքում երբ ընտրութիւնները կատարւում են միանգամից, ամբողջ ընտրող մասսայի կողմից հասարակ ձայների մեծամասնութեամբ, ակնյայտ է, որ ներկայացուցիչներ կը ընկնեն մի կուսակցութեան թեկնածուները միայն, որովհետև նրա կողմը կլինի մեծամասնութիւնը, (700,000 քաղաքացիներից 400,000-ը.) իսկ մնացած կուսակցութիւնները բոլորովին ներկայացուցիչներ չեն ունենայ: Եյդ անբարեխղճութիւն է: Եթէ 100,000 քաղաքացիներին ընկնում է մի ներկայացուցիչ, այն ժամանակ, բարեխղճորէն, առաջին կուսակցութիւնը, որի մէջ կան 400,000 քաղաքացիներ, պէտք է 4 ներկայացուցիչներ

ունենայ, երկրորդը որ 200,000 քաղաքացիներ ունի, 2 ներկայացուցիչ, իսկ երրորդը որ 100,000 ընտրուցներ ունի, պէտք է ունենայ 1 ներկայացուցիչ. այն ժամանակ, շրջավայրի ներկայացուցիչների նոյն քանակը, այսինքն 7 հոգին, ամեն մի կուսակցութեան անդամների քանակութեան համեմատ, հաւասարապէս բաժանում է բոլոր կուսակցութիւնների վերայ. բոլոր երեք կուսակցութիւնները կը ներկայացնեն համայնական ժողովում ձայների համեմատական քանակութեամբ: Հետևապէս, անհրաժեշտ է որ ընտրութիւնները կատարեն ոչ միայն շրջավայրերը, այլ և այդ շրջավայրերում գտնւած կուսակցութիւնները համաշափօրէն կամ ինչպէս ասում են ամեն կուսակցութեան ընտրուցների պրօպօրցիօնալ քանակութեան համեմատ: Այդպիսի համաշափ կամ պրօպօրցիօնալ ընտրութիւնները պէտք է փոխարինեն «ձայների հասարակ մեծամասնութեամբ» կատարած ընտրութիւններին, եթէ միայն իսկապէս ցանկանում են ճիշտ և բարեխղճ ներկայացուցիչ. դորա համար էլ, այն ամերը ովքեր անկեղծօրէն ցանկանում են որ համայնական ժողովը ամբողջ ժողովրդի իսկական կամքի և ցանկութեան արտայատիչը լինի, պահանջում են ոչ միայն ընդհանուր, հա-

ւասար, ուղղակի և գաղտնի ընտրողական իրա-  
ւունք այլ և պրօպօրցիօնալ ընտրութիւններ:

Համայնական ներկայացուցիչների ժողովը գե-  
կավարում է ամբողջ պետութեան գործերը. բայց  
և կան տեղական աւելի մանր շատ գործեր, ո-  
րոնք վճռուած են գաւառական վարչութիւններում  
և խորհուրդներում:

Նոցանում էլ կան ժողովրդի ներկայացուցիչ-  
ներ, բայց բոլորն էլ գիտեն թէ ինչ կերպ են  
նորա ընտրում: Տեղական գործերը ուղիղ և յա-  
ջող վարելու համար, անհրաժեշտ է որ այդ գա-  
ւառական վարչութիւնների և խորհուրդների ներ-  
կայացուցիչներն էլ ընտրեն ընդհանուր, հաւա-  
սար, ուղղակի և գաղտնի ընտրողական իրաւուն-  
քի հիման վերայ, ընտրութիւնների պրօպօրցիօ-  
նալ սիստեմով:

Այն ժամանակ բոլոր կառավարչութիւնը և  
օրէնսդրութիւնը թէ տեղական և թէ ընդհա-  
նուր, իրապէս կախուած կը լինի նոյն իրա ժո-  
ղովրդի կամրից:

Վ Ս Ր Ջ



<< Ազգային գրադարան



NL0206476

35. 622

465


30

ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

1) Գեանազորուր	}	. . . . . 3 կ
		Վ. Հիւզո
2) Լրտես	}	. . . . . 10 կ

Գումարով գնողներին 30% զիջում կլինի.

Գրմել՝ Александрополь, Арсену Теръ-Аракеляни



ՇՈՒՏՈՎ ԼՈՅՎ ԿՏԵՍՆԻ

(Գ. ԳԵՐԷ)

ԹԷ ԻՆՉՊԷՍ ԵՍ ՍՕՅԻԸ.-ԴԷՄՕԿՐԵՏ ԳԵՐԶԱՅ

